ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՌ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱԼՈՅԱՆ

ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՂԱՆԱԿ. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АЛОЯН ГОР АРАМАИСОВИЧ

НАСИЛИЕ КАК СПОСОБ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ СОБСТВЕННОСТИ: УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – «Уголовное право и криминология; уголовно-исполнительное право»

ЕРЕВАН 2014

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Առաքելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ս. Դիլբանդյան

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Վարդապետյան

Առաջատար կազմակերպություն ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. նոյեմբերի 12-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի հոկտեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների դոկտոր, դոցենտ
Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: к.ю.н., доцент С. Аракелян

Официальные оппоненты: д.ю.н., профессор С. Дилбандян

к.ю.н. А. Вардапетян

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 12-ого ноября 2014г. в 14^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 10 октября 2014г.

Ученый секретарь специализированного совета,
Доктор юридических наук, доцент В. Аветисян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների մասնաբաժինը հանցավորության ընդհանուր կառուցվածքում ավանդաբար ամենամեծն է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Մասնավորապես, վերջին տարիների պաշտոնական վիճակագրության ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ մեր երկրում հատկապես անբարենպաստ են սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների միտումները: Ընդ որում, վերջիններս, իրենց հերթին, բռնությամբ կատարվող հանցագործությունների ընդհանուր կառուցվածքում ունեն ամենամեծ տեսակարար կշիռը:

Բռնությունը նշված հանցագործություններում հանդես է գալիս որպես հանցավոր արարքի կատարման եղանակ, որը, որպես կանոն, գործադրվում է այն կատարողների շահադիտական պահանջմունքները բավարարելու նպատակին հասնելու համար: Հետևաբար, նման հանցագործությունների տարածվածությունը վկայում է մեր հասարակության մեջ ոչ միայն ուրիշի սեփականության, այլև մարդկային կենսագործունեության կարևորագույն արժեքների՝ կյանքի, առողջության, ֆիզիկական անձեռնմխելիության անտեսման, դրանց նկատմամբ անտարբեր և, նույնիսկ, բացասական վերաբերմունքի մասին:

Հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ ավազակություններ, կողոպուտներ և շորթումներ մեր երկրում առավել հաճախ են սկսել կատարել կանայք ու անչափահասները: Առավել մեծ տարածում են ստացել նշված ա-րարքները կազմակերպված հանցավոր խմբերի կազմում և զենքի (հատկա-պես՝ հրազենի) գործադրմամբ կատարելու, ինչպես նաև կրկնահանցագործությունների դեպքերը:

Այս առումով անհրաժեշտություն է առաջանում տեսական պատշաճ խորությամբ բացահայտել սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների միտումները, դրանց նպաստող գործոնները, այդ հանցանքները կատարողների և դրանցից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները, և դրա հիման վրա մշակել ու առաջարկել քննարկվող հանցագործությունների կանխարգելման հիմնական ուղղությունները: Այս ամենն, անկասկած, կնպաստի նաև նշված հանցագործությունների դեմ պայքարին ուղղված իրավակիրառական պրակտիկայի կատարելագործմանը, դրա արդյունավետության բարձրացմանը:

Համալիր և բազմակողմանի հետազոտության անհրաժեշտություն են ենթադրում նաև քննարկվող հանցագործությունների քրեաիրավական հիմնախնդիրները: Մասնավորապես, օրենսդրական կարգավորման կարիք ունի բռնության հասկացությունը, որը, մեր կարծիքով, պետք է սահմանվի հենց քրեական օրենսգրքով: Բացի դրանից, խիստ կարևորվում են քննարկվող հանցագործությունների՝ մեկը մյուսից և հարակից այլ հանցավոր արարքնե-րից սահմանազատելու, ինչպես նաև քրեական օրենսդրության համապա-տասխան դրույթների հստակեցման ու կատարելագործման հետ կապված հարցերը:

Վերը նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սոցիալական, տնտեսական, քաղաքական և դատաիրավական բնույթի բարեփոխումների ներկայիս պայմաններում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների ուսումնասիրությունը ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն ունի, ինչն էլ պայմանավորում է ատենախոսական սույն հետազոտության հրատապությունը և դրա թեմայի արդիականությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներին անդրադարձել են մի շարք վաստակաշատ գիտնականներ: Մասնավորապես, Ս. Աբելցևը, Ա. Ալեկսեևը, Ն. Անդեսենը, Յու. Անտոնյանը, Գ. Ավանեսովը, Մ. Բաբաևը, Ռ. Բազարովը, Լ. Գաուխմանը, Ա. Գուգենբյուլը, Պ. Դագելը, Ա. Դոլգովան, Ա. Դյաչենկոն, Վ. Էմինովը, Ա. Ժալինսկին, Ս. Ինշակովը, Պ. Լաֆարգը, Յու. Լյապունովը, Վ. Լունեևը, Ի. Կարպեցը, Գ. Կրիգերը, Ի. Կոզաչենկոն, Ս. Կոչոին, Վ. Կվաշիսը, Վ. Կուդրյավցևը, Ն. Կուզնեցովան, Վ. Մալկովը, Ս. Մակսիմովը, Ա. Մարցևը, Վ. Մինսկայան, Հ. Շնայդերը, Գ. Չեչելը, Ի. Պետինը, Ա. Պիոնտկովսկին, Է. Պոբեգայլոն, Վ. Ռիբալսկայան, Դ. Ռիվմանը, Ա. Սանտալովը, Է. Սիդորենկոն, Ս. Սոլոդովնիկովը, Վ. Վանդիշևը, Վ. Վեկլենկոն, Ն. Վինոկուրովան, Վ. Տկաչենկոն, Է. Ֆերրին, Լ. Ֆրանկը և այլոք: Սակայն այս գիտնականների հետազոտությունների արդյունքները հիմնականում հնացած են և, բացի դրանից, այդ արդյունքները չեն վերաբերում Հայաստանի Հանրապետությանը:

Հանցավորության քննարկվող տեսակին են նվիրված նաև ռուսաստանցի գիտնականներ Բ. Ախմետովի, Դ. Բարչենկոյի, Բ. Բեյբուլատովի, Գ. Բորզենկովի, Ի. Գալիմովի, Վ. Էնտյուի, Ա. Իվախնենկոյի, Լ. Խանախմեդովայի, Լ. Կրուգլիկովի, Ե. Նիկիտինի, Վ. Պլոխովայի, Ռ. Շարապովի, Ս. Շպակովսկու, Վ. Ռոժկովի, Վ. Սոլոդկու, Վ. Վյունովի, Ռ. Տոկարչուկի, Օ. Տելյուկովայի, Լ. Օկսի և այլոց կողմից վերջին տարիներին իրականացված ատենախոսական հետազոտությունները, որոնք պարունակում են սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնախնդիրներին վերաբերող ժամանակակից տեսակետներ: Սակայն դրանք ևս կապված չեն հայաստանյան իրականության հետ:

ՀՀ-ում նշված հիմնախնդիրների վերաբերյալ հատուկ համալիր հետազոտություններ գրեթե չեն

իրականացվել: Դրանց թվում, թերևս, կարելի է առանձնացնել, օրինակ՝ Ռ. Ալավերդյանի, Ս. Առաքելյանի, Ռ. Ավագյանի, Ս. Ավետիսյանի, Է. Բորյանի, Ա. Գաբուզյանի, Հ. Խաչիկյանի, Ա. Մարգարյանի, Տ. Ներսիսյանի, Ա. Ղուկասյանի, Գ. Սարկիսովի, Տ. Սիմոնյանի աշխատությունները, որոնցում որոշ չափով անդրադարձ է կատարվում նաև սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներին:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ սույն ատենախոսությամբ հետազոտության թեման ամբողջապես չի սպառվում, և քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ հետագա ուսումնասիրությունների կարիքն զգում:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության **առարկան** են սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հանցավորության տվյալ տեսակի վիճակի, կառուցվածքի, շարժընթացի դրսևորումներն ու օրինաչափությունները, քննարկվող հանցանքները կատարողների և դրանցից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները, ինչպես նաև քննարկվող հանցագործություններին նպաստող գործոնները և դրանց դեմ պայքարի իրավական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, կազմակերպակառավարչական բնույթի միջոցառումները:

Հետազոտության **օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում սեփակա-նության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներն են, ինչպես նաև շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող այլ հանցագործությունների ու ընդհանուր հանցավորության հետ դրանց հարաբերակցությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսական սույն հետազոտության հիմնական **նպատակները** Հայաստանի Հանրապետությունում սեփականության

դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական և քրեաիրավական հիմնախնդիրների ամբողջական վերլուծությունն է և դրա հիման վրա հանցավորության տվյալ տեսակի դեմ պայքարի տեսական, գործնական և օրենսդրական հիմքերի կատարելագործման առաջարկությունների մշակումն ու առաջքաշումը:

Նշված նպատակների իրականացմամբ է պայմանավորված հետևյալ հետազոտական **խնդիրների** լուծման անհրաժեշտությունը՝

– ուսումնասիրել ՀՀ-ում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական հատկանիշները, ինչպես նաև հանցավորության տվյալ տեսակի վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը,

– վերլուծել սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունները, ՀՀ-ում այդ հանցագործությունների վիճակի, կառուցվածքի, շարժընթացի դրսևորումներն ու օրինաչափությունները, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված բռնությամբ հանցանք կատարողների և նրանց հանցավոր արարքներից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները,

– հետազոտել շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցագործություններ իրականացնողների հանցավոր վարքագծի վրա ազդող գործոնների համակարգը,

– բացահայտել ՀՀ-ում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների պատճառներն ու նպաստող պայմանները, դրանց տարածվածությունն ու ազդեցության աստիճանը,

– ուսումնասիրել հայկական ազգային հոգեբանության առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը սեփականության դեմ ուղղված բռնու-

թյամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական տարբերցուցանիշների վրա,

– մշակել ՀՀ քրեական գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ,

– հետազոտել արտասահմանյան երկրների համապատասխան օրենս-դրությունը և իրավակիրառական պրակտիկան ու դրա հիման վրա իրակա-նացնել Հայաստանի հետ համեմատական վերլուծություն:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում իմացության դիալեկտիկական, տրամաբանական, անալիզի, սինթեզի, անալոգիայի, պատմաիրավական, համեմատական-իրավական, ձևական-իրավաբանական, վիճակագրական, հասարակագիտական և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդները:

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև վիճակագրական տվյալների վերլուծության, հարցման, անկետավորման, համեմատական-իրավական վերլուծության և փաստաթղթերի հետազոտության մեթոդները:

Վերը նշված գիտական մեթոդների կիրառումն ապահովել է ատենախոսական հետազոտությանը ներկայացվող համալիր և միջճյուղային մոտեցման պահանջների կատարումը:

Ատենախոսության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել կրիմինալոգիայի, քրեական, քրեակատարողական, քաղաքացիական իրավունքի, քրեական դատավարության ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները: Օգտագործվել են նաև գիտագործնական համաժողովների, սեմինարների բազ-մաթիվ նյութեր:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օերնսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օերնսգիրքը, ՀՀ քրեակատարողական

օրենսգիրքը, ՀՀ սեփականության մասին օրենքը և այլ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև արտասահմանյան տարբեր երկրների, մասնավորապես՝ ԱՊՀ անդամ պետությունների, ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և մուսուլմանական մի շարք երկրների քրեական և քրեադատավարական օրենսգրքերը:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության տարբեր ատյանների դատարաններում 2004-2011 թվականների ընթացքում քննության առարկա դարձած սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների վերաբերյալ 250 քրեական գործերի ուսումնասիրության արդյունքները:

Միևնույն ժամանակ ուսումնասիրվել, վերլուծվել և ամփոփվել են հանցավորության քննարկվող տեսակի վերաբերյալ այլ տարածաշրջաններում և այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Բացի այդ, հետազոտվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության գնահատման, տվյալ գործընթացում առկա թերությունների, բացթողումների, ինչպես նաև դրական փորձի բացահայտման նկատառումներով նախապես մշակված ծրագրով հարցազրույցներ են անցկացվել 20 դատավորների, իրավապահ մարմինների 50 աշխատակիցների և սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների համար դատապարտված 30 անձանց հետ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական գիտության մեջ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական և քրեաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված համակողմանի, համալիր հետազոտություն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար: Տվյալ

հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել և կիրառվել հետևյալ ոլորտներում՝

– ՀՀ գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում,

– սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համալիր ծրագրերի մշակման ժամանակ,

– հանցավորության և, հատկապես՝ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնախնդիրներին վերաբերող գիտական այլ հետազոտություններում,

– գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ քրեական իրա-վունք, քրեակատարողական իրավունք և կրիմինալոգիա դասավանդելիս,

– իրավակիրառական պրակտիկայում՝ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոնների բա-ցահայտման և այդ հանցագործությունների կանխարգելման կոնկրետ միջոցառումների մշակման ու իրականացման նպատակով, ինչպես նաև մեթո-դաբանական և կիրառական այլ նպատակներ իրականացնելիս:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Ատենախո-սության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակած և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկա-յացվող դրույթները: Հետազոտության գիտական նորույթն առաջին հերթին պայմանավորված է սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների տեսական թույլ մշակվածությամբ: Մասնավորապես, բազմաթիվ հարցեր, ինչպիսիք են սեփականության դեմ ուղղված

բռնությամբ կատարվող հանցագործությունները նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, այդ հանցագործությունների ժամանակակից վիճակը, կառուցվածքը, շարժընթացն ու միտումները, քննարկվող հանցավոր արարքներին նպաստող գործոնները, ինչպես նաև դրանք կատարողի և նրա արարքից տուժողի անձը բնութագրող առանձնահատկությունները, նշված հանցագործությունների կանխարգելման անհրաժեշտ ուղղությունները և այլն, ներկայումս շատ քիչ են ուսումնասիրված: Միևնույն ժամանակ կա-տարելագործման լուրջ կարիք ունի ՀՀ քրեական գործող օրենսդրությունը, ինչն առավել արդիական է դառնում հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների ներկայիս փուլում:

Բացի այդ, աշխատանքում հայկական իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ ատենախոսական մակարդակով և համակարգային, համալիր մոտեցման հիման վրա իրականացվել է սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական ինչպես տեսական, այնպես էլ գործնական հիմնա-խնդիրների հետազոտություն: Դրա հիման վրա մշակվել և առաջ են քաշվել Հայաստանի Հանրապետությունում սեփականության դեմ ուղղված բռնու-թյամբ կատարվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետու-թյան բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝**

1. ՀՀ քրեական գործող օրենսգրքի դրույթներին համապատասխան, հարկադրանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են անձին անօգնական վիճակի մեջ դնելու նպատակով նրան գաղտնի կերպով տարատեսակ նյութերով արբեցնելը կամ կախյալ վիճակում գտնվող անձի մասին հոգ տանելու պարտականությունները չկատարելը, բռնության դրսևորման ձևեր չեն: Այդ

իմաստով ստացվում է, որ քրեական օրենսգրքով նախատեսված մի շարք հանցակազմերի առումով (այդ թվում՝ ավազակության, կողոպուտի, շորթման, առանց հափշտակելու նպատակի ուրիշի տրանսպորտային միջոցը փախցնելու համար պատասխանատվություն նախատեսողների), որտեղ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը նախատեսված են որպես հանցագործության հատկանիշներ, հարկադրանքի վերոնշյալ ձևերը չեն կարող իրավաբանական նշանակություն ունենալ և ազդել արարքի որակման վրա: Նման վիճակն անընդունելի է: Հետևաբար, օրենսդրորեն պետք է սահմանել, որ համապատասխան հանցագործությունների հատկանիշ է համարվում նաև մարդու կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով, նրա օրգանիզմ որոշակի նյութեր ներարկելով կամ հիպնոս կիրառելով, կամ նրա մասին հոգ տանելու պարտականությունը չկատարելով վերջինիս անօգնական վիճակի մեջ դնելը:

2. Ավազակությունը պետք է համարվի զենքի գործադրմամբ (ծանրացնող հանգամանքներում) կատարված նաև գազային կամ ազդանշանային զենք կիրառելու այն դեպքերում, երբ դրանց գործադրումը վտանգ է ներկայացնում մարդու կյանքի կամ առողջության համար: Հակառակ պարագայում արարքը պետք է որակել որպես կողոպուտ, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով: Նման դեպքերում արարքի ճշգրիտ որակումը հնարավոր է միայն նշված սարքերի ներգործության բնույթի վերաբերյալ փորձագիտական համապատասխան եզրակացության հիման վրա:

2.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ հանցավոր ոտնձգությունների դեպքում կտրուկ բարձրանում է արարքի վտանգավորությունը և մեծանում տուժողին ավելի ծանր վնաս պատճառելու հավանականությունը, տվյալ ծանրացնող հանգամանքն անհրաժեշտ է նախատեսել նաև շորթման և

տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու առավել վտանգավոր տեսակների շարքում:

3. Տուժողին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառելը պետք է դիտարկվի «բռնություն» կատեգորիայի (որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության եղանակի) շրջանակներից դուրս և որակվի ինքնուրույն: Ընդ որում, եթե գործադրվող ֆիզիկական բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի նպատակն ու շարժառիթը կապված չեն ուրիշի գույքին կամ գույքի նկատմամբ իրավունքին տիրանալու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու հետ, ապա դրանք չեն կարող դիտվել միայն որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության եղանակ և պետք է լրացուցիչ որակվեն որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն:

4. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունները ՀՀ-ում շուրջ հինգ անգամ առավել հաճախ են կատարվում քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրի ունևոր բնակչության մեծ մասը կենտրոնանում է հենց քաղաքներում: Դրանք, որպես կանոն, ուղղված են ֆիզիկական անձանց և շատ հազվադեպ՝ իրավաբանական անձանց, պետական կամ հանրային սեփականության դեմ: Հետևաբար ՀՀ-ում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների առումով առավել խոցելի է բնակչության անձնական սեփականությունը: Ուստի դրանց դեմ պայքարով զբաղվող սուբյեկտները պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն հենց տվյալ ոլորտի անվտանգության ապահովմանը:

5. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխման առումով հատկապես կարևորվում են վիկտիմալոգիական բնույթի միջոցառումները: Մասնավորապես, քննարկվող հանցա-

գործություններից տուժելու հավանականության նվազեցմանն էապես կարող են նպաստել ողջամիտ զգուշավորությունը և շրջահայացությունը: Ըստ այդմ, պետք է խուսափել անծանոթների առջև բնակարանի դուռը կամ առանձնատան դարպասը բացելուց, կասկածելի անձանց հետ շենքի շքամուտք կամ վերելակ մտնելուց, ավտոմեքենա նստելու առաջարկությունն ընդունելուց: Բացի այդ, ավելորդ ուշադրություն չգրավելու համար, անհրաժեշտ է հիմնականում հնարավորինս պարզ հագնվել և խուսափել թանկարժեք իրեր կրելուց կամ, գոնե, հավանական վտանգը կանխատեսելով, թաքցնել դրանք պայուսակի մեջ կամ հագուստի տակ: Գիշերային ժամերին պետք է հնարավորինս խուսափել ոչ մարդաշատ վայրերից, վատ լուսավորված փողոցներից, ստորգետնյա անցումներից, պուրակներից, մետրոյի և հասարակական այլ տրանսպորտի կանգառներից: Իսկ այն դեպքերում, երբ ուշ ժամերին տուն վերադառնալու անհրաժեշտություն է առաջանում, պետք է ընտրել ոչ թե ամենակարճ, այլ ամենաանվտանգ, մարդաշատ, լուսավորված ճանապարհը, անգամ եթե այն շատավելի երկար է:

Աշխատության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական սույն աշխատությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են տասը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու նորմատիվ իրավական ակտերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ընդգծվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, քննարկվող թեմային առնչվող հիմնախնդիրների մշակվածության աստիճանը և գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները,

պարզաբանվում են հետազոտության մեթոդական, տեսական և փորձառնական հիմքերը, դրա տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների ընդհանուր բնութագիրը»**, ներառում է երեք պարագրաֆ:

Առաջին պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի», ներկայացված են ՀՀ-ում սեփականության դեմ ուղղված հանցավոր արարքների համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենսդրության զարգացման պատմությունը, ինչպես նաև համապատասխան հանցակազմերը բնորոշող օրենսդրական ձևակերպումների առանձնահատկությունները: Նշվում է, որ փորձագիտական տարբեր գնահատականներով հանցավորության կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը բնութագրական է շահադիտական (այդ թվում՝ շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող) հանցագործություններին: Մասնագետների կարծիքով, աշխարհի գրեթե բոլոր երկրներում նշված հանցագործությունները կազմում են 70-90%: ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն ևս՝ հանցագործությունների ընդհանուր զանգվածում գերակայում են հենց նշված հանցավոր արարքները:

Բացի այդ, վերլուծելով ՀՀ քրեական գործող օրենսգրքի համապատասխան դրույթները՝ ատենախոսը հետևություն է անում, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կարելի է դասակարգել երկու մեծ խմբի՝ 1) հափշտակությունների և 2) սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների: Նշվում է նաև, որ ըստ մեղքի ձևի, քննարկվող հանցագործությունները կարելի է բաժանել՝ 1) դիտավորությամբ կատարվողների և 2) անզգուշությամբ կատարվողների, իսկ ըստ օբյեկտիվ կողմի առանձնահատկությունների՝ 1) բռնությամբ կատարվողների և 2) առանց բռնության կատարվողների:

Նույն գլխի **երկրորդ պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության»**, ատենախոսը, նպատակ ունենալով նպաստել ՀՀ քրեական գործող օրենսդրության կատարելագործմանը և հայաստանյան իրավակիրառական պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը, անդրադառնում է արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրական համապատասխան դրույթների և դատաքննչական պրակտիկայի առանձնահատկությունների համեմատական վերլուծությանը: Այս առումով քննարկվում են ինչպես մայրցամաքային (ռոմանագերմանական), այնպես էլ անգլասաքսոնական և մուսուլմանական իրավական համակարգերի բնութագրական գծերը:

Նշվում է, որ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ ևս սեփականության դեմ ուղղված հանցագործություններն առանձնահատուկ կարգավորման են ենթարկված: Դրանք նույնպես կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների: Ընդ որում, սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների շարքում արտասահմանյան շատ երկրների քրեական օրենսդրությամբ ևս նախատեսված են շորթումը, ուրիշի տրանսպորտային միջոցին ապօրինի տիրանալը, գույքը ոչնչացնելը կամ վնասելը:

Բացի այդ, արտասահմանյան երկրների քրեական գործող օրենսդրության դրույթներին համապատասխան, ըստ հեղինակի, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները նույնպես կարելի է դասակարգել շահադիտականների և ոչ շահադիտականների, բռնությամբ և առանց բռնության կատարվողների, դիտավորությամբ և անզգուշությամբ կատարվողների: Ընդ որում, այդ երկրների օրենսդրության համաձայն ևս՝ մյուս բոլոր հանցավոր արարքների համեմատ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններն

օժտված են հանրային առավել բարձր վտանգավորությամբ:

Առաջին գլխի **երրորդ պարագրաֆում՝ «Բռնությունը որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության հանցակազմի հատկանիշ»**, ատենախոսն անդրադարձ է կատարում բռնության հասկացությային տարբեր բաղադրատարրերի (սոցիոլոգիական, կրոնական, բժշկական, սեռական, հանցավոր նայլն) քննարկմանը: Այս առումով նշվում է, որ «բռնություն» և «հանցագործություն» հասկացությունները չի կարելի նույնացնել: Բռնության ամեն դրսևորում չէ, որ պարունակում է քրեական օրենսգրքի որևէ հանցակազմով նախատեսված հատկանիշներ: Ուստի բռնությամբ կատարվող հանցագործությունների մասին, ըստ հեղինակի, կարելի է խոսել միայն այն պարագայում, երբ բռնությունը նախատեսված է որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ:

Ամփոփելով մասնագիտական գրականության մեջ առկա հիմնական մոտեցումները՝ ատենախոսը հանգում է հետևության, որ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների եղանակ պետք է համարել ոչ միայն ֆիզիկական ուժի գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը, այլև տուժողի կամքին հակառակ նրա օրգանիզմ ալկոհոլ, թմրանյութ, հոգեմետ, ուժեղ ներգործող կամ թունավոր նյութեր ներարկելու կամ հիպնոսի կիրառմամբ նրան անգիտակից կամ անօգնական վիճակի մեջ դնելը, ինչպես նաև կախյալ վիճակում գտնվող անձի մասին հոգ տանելու պարտականությունները չկատարելով՝ նրա կյանքը կամ առողջությունը վտանգելը կամ նման արարքներ կատարելու սպառնալիքները:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը»** բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների օբյեկտիվ հատկանիշները», հեղինակն անդրադառնում է քննարկվող հանցավոր ոտնձգությունների օբյեկտը և օբյեկտիվ կողմը

բնութագրող հատկանիշների առանձնահատկություններին:

Նշվում է, որ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների պարագայում գործ ունենք, այսպես կոչված, երկօբյեկտ հանցագործությունների հետ: Այսինքն, համապատասխան հանցակազմերով որակվելու համար, սրանք պետք է միևնույն ժամանակ ոտնձգեն երկու օբյեկտի դեմ: Ընդ որում, սեփականության իրավունքը քննարկվող հանցագործությունների հիմնական անմիջական օբյեկտն է, իսկ մյուսները (մարդու կյանքը, առողջությունը, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիությունը և այլն)՝ պարտադիր լրացուցիչը: Բացի այդ, հիմնական անմիջական օբյեկտի որոշումը, ըստ հեղինակի, պայմանավորված է ոտնձգության առարկայով, իսկ պարտադիր լրացուցիչինը՝ հարկադրանքի ձևով:

Միևնույն ժամանակ ավազակության, կողոպուտի և շորթման հանցակազմերը միայն որոշակի առարկաներով սահմանափակելը, հեղինակի կարծիքով, ճիշտ չէ: Բանն այն է, որ այս հանցագործությունների էությունը ոչ թե առարկայի առանձնահատկությունների, այլ լրացուցիչ անմիջական օբյեկտի դեմ ոտնձգելու մեջ է: Բացառություն, թերևս, կարելի է համարել շորթման հանցակազմը, որի պարագայում օրենքով նախատեսված է այնպիսի առարկա, որը չի կարող լինել սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող այլ հանցագործություններում (գույքային բնույթի այլ գործողությունները): Ուստի, հանցագործության առարկայով քննարկվող հանցակազմերի սահմանազատումը խիստ պայմանական է:

Վերլուծելով ավազակության օբյեկտիվ կողմը՝ ատենախոսը նշում է, որ առանձին դեպքերում գույքը կարող է հափշտակվել նաև կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ, սակայն՝ առանց հարձակման: Օրինակ՝ երբ հանցավորը տուժողին թույն է տալիս: Ուստի, արարքի որակման տեսանկյունից

հարձակումը ինքնին չպետք է որևէ նշանակություն ունենա: Ավազակության օբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշ պետք է համարվի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը, որը կարող է նաև կապված չլինել հարձակման հետ: Հետևաբար, ավազակության հատկանիշ պետք է համարել մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր ցանկացած ոտնձգությունը, այլ ոչ թե միայն հարձակումը, ինչը, սակայն, չի բխում ՀՀ գործող քր. օր.-ի հոդված 175-ի ձևակերպումից:

Ամփոփելով սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների օբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունների քննարկումը՝ հեղինակը նշում է, որ վերոհիշյալ հանցավոր արարքները հիմնականում նախատեսված են ձևական հանցակազմերով: Ավազակությունն ավարտված է համարվում ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում կատարելու, շորթումը՝ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջ ներկայացնելու, իսկ ուրիշի տրանսպորտային միջոցին առանց հափշտակելու նպատակի ապօրինաբար տիրանալը՝ այդ միջոցին տիրանալու (փախցնելու) պահից: Բացառություն է կազմում միայն կողոպուտը, որի ավարտման պահը համընկնում է հափշտակության մյուս եղանակների ավարտման պահի (հափշտակվածն իր հայեցողությամբ տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորության) հետ:

Քննարկվող գլխի **երկրորդ պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների սուբյեկտիվ հատկանիշները»**, հեղինակն անդրադառնում է քննարկվող հանցավոր ոտնձգությունների սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների առանձնահատկություններին:

Նշվում է, որ ուսումնասիրվող հանցագործությունների սուբյեկտ կարող են հանդիսանալ հանցանքը կատարելու պահին 14 տարին

լրացած մեղսունակ ֆիզիկական բոլոր անձինք: Բացառություն են կազմում ավազակությամբ կամ շորթմամբ առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու դեպքերը: Միևնույն ժամանակ քննադատության է արժանանում այն մոտեցումը, որ մի շարք հանցագործությունների պարագայում անհրաժեշտ է նույնիսկ նվազեցնել քրեական պատասխանատվության տարիքի նվազագույն սահմանը: Բանն այն է, որ հենց 14 տարեկանում է, որպես կանոն, ավարտվում անցումային տարիքը, սկսվում անձի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական ձևավորման հիմնական գործընթացը, ինչպես նաև նրա աշխարհայացքի, կենսափորձի կայացումը: Այսինքն, առնվազն այդ տարիքից սկսած, ըստ հեղինակի, կարելի է խոսել անձի կողմից ոչ միայն որոշակի արարքների հանրային վտանգավորության, այլև քրեական պատասխանատվության և պատժի իմաստը գիտակցելուսին:

Միևնույն ժամանակ նշվում է, որ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Անզգուշությամբ կամ անուղղակի դիտավորությամբ գործելով՝ հնարավոր չէ որոշակի նպատակներով ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք կիրառելով, տիրանալ ուրիշի գույքին կամ դրա նկատմամբ իրավունքին կամ գույքային պահանջ ներկայացնել:

Բացի այդ, քննարկվող հանցագործությունների պարագայում հանցավորի մեղքի ձևի և տեսակի, նրա շարժառիթների ու նպատակների բացահայտումը, ատենախոսի կարծիքով, պետք է իրականացվի երեք ասպեկտով՝ 1) ուրիշի գույքին տիրանալու կապակցությամբ, 2) գործադրվող ֆիզիկական կամ հոգեկան բռնության կապակցությամբ և 3) տուժողին պատճառվող վնասի կապակցությամբ: Ըստ այդմ, տուժողին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառելը պետք է դիտարկվի «բռնություն»

կատեգորիայի (սեփականության դեմ ուղղված հանցագործության եղանակի) շրջանակներից դուրս և որակվի ինքնուրույն: Ընդ որում, եթե գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի նպատակն ու շարժառիթը կապված չեն ուրիշի գույքին կամ գույքի նկատմամբ իրավունքին տիրանալու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու հետ, ապա դրանք չեն կարող դիտվել միայն որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության եղանակ և պետք է լրացուցիչ որակվեն որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն:

Երկրորդ գլխի **երրորդ պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների ծանրացնող հանգամանքները»**, ատենախոսն անդրադառնում է քննարկվող հանցագործությունների առավել վտանգավոր տեսակների վերլուծությանը: Մասնավորապես, նշվում է, որ վերոհիշյալ հանցագործությունների ծանրացնող հանգամանքների քննարկումը ենթադրում է միայն ավազակության և շորթման առավել վտանգավոր համապատասխան տեսակների առանձ-նահատկությունների պարզաբանում: Բանն այն է, որ ֆիզիկական կամ հոգեկան բռնության գործադրումն ինքնին հանդիսանում է կողոպուտի և ուրիշի տրանս-պորտային միջոցին առանց հափշտակելու նպատակի ապո-րինաբար տիրանալու (փախցնելու) ծանրացնող հանգամանք:

Միևնույն ժամանակ նշվում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.06.2011 թ. թիվ ՀՕ-219-Ն օրենքով պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելը սահմանված է որպես գողության և կողոպուտի ծանրացնող, իսկ բնակարան ապօրինի մուտք գործելը՝ առավել ծանրացնող հանգամանք: Օրենսդրական տվյալ փոփոխությունը, հեղինակի կարծիքով, լիովին տրամաբանական է և արդարացված: Ակնհայտ է, որ բնակարանի անձեռնմխելիության խախտումն առավել

վտանգավոր է, քան պահեստարանինը կամ այլ շինությանը: Սակայն անհասկանալի է, թե օրենսդիրն ինչու նույն մոտեցումը չի դրսևորել ավազակության պարագայում, քանզի բնակարան, պահեստարան և շինություն ապօրինի մուտք գործելը տվյալ դեպքում հավասարեցված են, ինչին, ըստ ատենախոսի, դժվար է համաձայնել:

Անդրադառնալով «որպես զենք օգտագործվող այլ առարկաներ» հասկացության քննարկմանը՝ հեղինակն առաջարկում է դիտարկել այն երկու իմաստով՝ լայն և նեղ: Մասնավորապես, որպես զենք օգտագործվող այլ առարկաներ ասելով՝ նեղ իմաստով, ըստ նրա, պետք է հասկանալ բոլոր այն սարքերն ու իրերը, որոնք օժտված են զենքի հատկություններով, բայց ունեն այլ, որպես կանոն, տնտեսական-կենցաղային կամ արտադրական նշանակություն: Իսկ լայն իմաստով դրանք ենթադրում են բոլոր այն առարկաները, որոնցով մարդու կյանքին կամ առողջությանը կարելի է վնաս պատճառել (այդ թվում՝ քարը, փայտը, մետաղյա ձողը և այլն): Ի դեպ, ինչպես մասնագիտական գրականության մեջ, այպես էլ իրավակիրառական պրակտիկայում ընդունված է օգտվել որպես զենք օգտագործվող այլ առարկաների լայն իմաստով հասկացությունից: Նշանակություն չունի՝ առարկան նախապես ենթարկվել է մշակման, կամ հանցավորը այն նախապես կրել է, թե ուղղակի վերցրել է դեպքի վայրում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ հանցավոր ոտնձգությունների դեպքում կտրուկ բարձրանում է արարքի վտանգավորությունը և մեծանում տուժողին ավելի ծանր վնաս պատճառելու հավանականությունը, ինչպես նաև այն, որ նշված առարկաների գործադրումը վկայում է հանցավորի ավելի հանդուգն և լկտի լինելու մասին՝ հեղինակն անհրաժեշտ է համարում տվյալ ծանրացնող հանգամանքի նախատեսումը նաև շորթման և տրանսպոր-

տային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու առավել վտանգավոր տեսակների շարքում:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը»**, բաղկացած է չորս պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների վիճակը կառուցվածքը և շարժընթացը», հեղինակը նշում է, որ քննարկվող հանցագործությունների վերջին տարիների միտումները Հայաստանի Հանրապետությունում բավականին անբարենպաստ են: Այդ մասին են վկայում ոչ միայն փորձագիտական տարբեր գնահատականները, այլև պաշտոնական վիճակագրության տվյալները: Մասնավորապես, 2004-2011 թթ. սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուցվածքում ՀՀ-ում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն ավազակությունները: Դրանց մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում 2.47% է, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.97%: Ավազակություններին հաջորդում են բռնությամբ զուգորդված կողոպուտները, որոնց մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում կազմում է 0.46%, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.18%: Վերջիններիս մի փոքր զիջում են շորթումները, որոնց մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում կազմում է 0.40%, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.16%: Ամենափոքր տեսակարար կշիռն ունեն ուրիշի տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու բռնությամբ զուգորդված դեպքերը: Այս հանցագործությունների մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում կազմում է 0.07%, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.03%:

Բացի այդ, հեղինակը հետևություն է անում, որ ՀՀ-ում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների առումով առավել խոցելի է բնակչության անձնական սեփականությունը: Հետևաբար, նշված հանցագործությունների դեմ պայքարով զբաղվող սուբյեկտները, ըստ նրա, պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն հենց տվյալ ոլորտի անվտանգության ապահովմանը:

Միևնույն ժամանակ նշվում է, որ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների վերոհիշյալ որակական և քանակական ցուցանիշները նախ և առաջ պայմանավորված են դրանց պաշտոնական գրանցման գործընթացով: Այլ կերպ ասած, քննարկվող հանցագործությունների՝ պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնացած (լատենտային) մասը ներկայացված թվային տվյալներում չի արտացոլվել: Մինչդեռ հեղինակի հետազոտությունները ցույց են տվել, որ ներկայումս ՀՀ-ում բավականին բարձր է ոչ միայն ավազակությունների, այլև շորթումների և բռնությամբ զուգորդված կողոպուտների ու տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերի լատենտայնության մակարդակը: Իրականում դրանք բոլորն էլ գրանցվում են շատ ավելի հազվադեպ, քան փաստացի կատարվում են: Ուստի, համապատասխան վերլուծություններ իրականացնելիս, ըստ ատենախոսի, անհրաժեշտ է միշտ հաշվի առնել նաև տվյալ համգամանքը:

Քննարկվող գլխի **երկրորդ պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ հանցանք կատարողների և դրանից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները»**, ատենախոսն անդրադառնում է վերոհիշյալ անձանց սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեա-իրավական առանձնահատկությունների հետազոտությանը:

Նշվում է, որ սեփականության դեմ ուղղված բռնությամբ զուգորդված հանցանքներ ՀՀ-ում հիմնականում կատարում են արական սեռի (98.4%), 18-40

տարեկան (77.7%), միջնակարգ կամ ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցող (86.1%) գործազուրկները (63.2%), ովքեր գործել են ալկոհոլային կամ թմրանյութային հարբածության վիճակում (57.9%): Այդ անձանց պահանջ-մունքները մեծ մասամբ (շուրջ 90%) կապված են եղել թանկարժեք իրեր, զարդեր, դրամ, ավտոմեքենա, կենցաղային նշանակության տարբեր առարկաներ, հագուստ ձեռք բերելու հետ: Նրանց ավելի քան 80%-ը գործել են շահադիտական դրդումներով, իսկ մնացածը՝ վրեժի, ինքնահաստատման, «գողական դրամարկղը» համալրելու և նման այլ շարժառիթներով: Սեփականու-թյան դեմ ուղղված բռնությամբ հանցանք կատարողների շուրջ 70%-ը նախկինում դատապարտված են եղել տարբեր հանցագործությունների համար: Նրանց 90%-ից ավելին նախկինում դատապարտված են եղել գույքային բնույթի հանցագործությունների (գլխավորապես՝ գողության, կողոպուտի կամ ավազակության), իսկ մնացած մասը՝ մարդու դեմ ուղղված բռնությամբ զուգորդված տարբեր հանցագործությունների կամ խուլիգանության համար: Քննարկվող հանցագործությունների 30%-ից ավելին ՀՀ-ում իրականացվել են խմբի կողմից: Ընդ որում, գրեթե բոլոր դեպքերում խմբի անդամները ճանաչել են միմյանց շատ վաղուց:

Բացի այդ, ատենախոսն արձանագրում է, որ ՀՀ-ում անչափահասները, ինչպես նաև օտարերկրացիները, գործազուրկները, թոշակառուները, ծառայողներն ու սովորողները շատ հազվադեպ են հանդիսանում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժողներ: Դրանցից առավելապես տուժում են նյութապես ապահովված, մշտական եկամուտ ունեցող, ՀՀ քաղաքացի հանդիսացող արական սեռի ներկայացուցիչները: Բացառություն են կազմում կողոպուտները, որոնցից գրեթե միշտ գլխավորապես տուժում են կանայք:

Ատենախոսության երրորդ գլխի **երրորդ պարագրաֆը՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների**

պատճառները և պայմանները», նվիրված է վերոհիշյալ հանցագործություններին նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների քննարկմանը: Մասնավորապես, հեղինակը նշում է որ հանցավորության (այդ թվում՝ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների) վրա էական ազդեցություն ունեցող ընդհանուր բնույթի գործոնների շարքում առաջին հերթին պետք է առանձնացնել սոցիալ-տնտեսական ոլորտում առկա պատճառներն ու պայմանները: Բանն այն է, որ աղքատությունը, հասարակության բևեռացումը, շերտավորումը հանցավորության, հատկապես՝ սեփականության դեմ ուղղված (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) հանցա-գործությունների հզոր դետերմինանտներ են:

Միաժամանակ նշվում է, որ աղքատությունը, ինչպես շատերն են սխալ պատկերացնում, ինքնին չի կարող համարվել հանցավորությունը պայմանավորող հիմնական և գլխավոր գործոն: Այս առումով առավել մեծ հանցածին ծանրաբեռնվածություն է կրում բնակչության սոցիալ-տնտեսական բևեռացումը (հասարակության անդամների շերտավորումը), որը վերջին տարիներին Հայաստանում հասել է աննախադեպ չափերի: Իսկ նման իրավիճակը, ուղեկցվելով անարդարության առկա վիճակը բարելավելուանհնարինության զգացումների տարածմամբ, պարարտ հող է ստեղծում բնակչության շրջանում սոցիալական լարվածության, տագնապայնության մակարդակի բարձրացման համար, ինչը լուրջ խթան է հատկապես շահադիտական-բռնի հանցավոր վարքագծի դրսևորման համար:

Նշվում է նաև, որ քննարկվող գործոնների շարքում ոչ պակաս նշանակություն ունի նյութայան կարիքը: Կարիքավորության մակարդակը պատմականորեն փոփոխական է: Այն, ինչ անցյալում ճոխության նշան էր համարվում, մեր օրերում կարող է պարզապես տարրական գոյության անհրաժեշտություն հանդիսանալ: Եթե

նյութական կարիքավորությունը կապենք միայն առաջին անհրաժեշտության առարկաների (սնունդ, հագուստ, լույս, ջեռուցում) տիրապետելու պահանջմունքների բավարարման հետ, ապա, ըստ հեղինակի, Հայաստանի Հանրապետությունում տվյալ մոտիվացիայով կատարվում են սեփականության դեմ ուղղված բռնությամբ զուգորդված հանցագործությունների ընդամենը 10%-ը:

Քննարկվող գլխի վերջին՝ **չորրորդ պարագրաֆում՝ «Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխումը»**, հեղինակն անդրադառնում է ուսումնասիրվող հանցագործությունների կանխարգելման ընդհանուր-սոցիալական և հատուկ-կրիմինալոգիական միջոցառումների հետազոտությանը:

Նշվում է, որ այդ բաժանումը խիստ պայմանական է, քանի որ թե՛ ընդհանուր-սոցիալական և թե՛ հատուկ-կրիմինալոգիական կանխումը իրականացվում են հասարակության շրջանակներում, ու երկուսն էլ կոչված են ներգործելու դրա անդամների կենսագործունեության վրա: Բացի այդ, գոյություն ունեն կանխարգելիչ նշանակության բազմաթիվ միջոցառումներ, որոնք միաժամանակ պարունակում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ կանխման բնորոշ գծեր:

Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխման առումով հեղինակը հատկապես կարևորում է վիկտիմալոգիական բնույթի միջոցառումները: Մասնավորապես, քննարկվող հանցագործություններից տուժելու հավանականության նվազեցմանն, ըստ նրա, էապես կարող են նպաստել ողջամիտ զգուշավորությունը և շրջահայացությունը: Ըստ այդմ, առաջարկվում է խուսափել անծանոթների առջև բնակարանի դուռը կամ առանձնատան դարպասը բացելուց, կասկածելի անձանց հետ շենքի շքամուտք կամ վերելակ մտնելուց, ավտոմեքենա նստելու առաջարկությունն ընդունելուց: Բացի այդ, ավելորդ ուշադրություն չգրավելու համար, ատենախոսի

կարծիքով, անհրաժեշտ է հիմնականում հնարավորինս պարզ հագնվել և խուսափել թանկարժեք իրեր կրելուց կամ, գոնե, հավանական վտանգը կանխատեսելով, թաքցնել դրանք պայուսակի մեջ կամ հագուստի տակ: Գիշերային ժամերին պետք է հնարավորինս խուսափել ոչ մարդաշատ վայրերից, վատ լուսավորված փողոցներից, ստորգետնյա անցումներից, պուրակներից, մետրոյի և հասարակական այլ տրանսպորտի կանգառներից: Իսկ այն դեպքերում, երբ ուշ ժամերի, մթով տուն վերադառնալու անհրաժեշտություն է առաջանում, պետք է ընտրել ոչ թե ամենակարճ, այլ ամենաանվտանգ, մարդաշատ, լուսավորված ճանապարհը, անգամ եթե այն շատ ավելի երկար է:

Եզրակացության մեջ ամփոփելով հետազոտության արդյունքները՝ ատենախոսն առանձնացնում է հետևյալ հիմնական հետևություններն ու առաջարկությունները.

1. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններում ֆիզիկական կամ հոգեկան բռնությունը հանդես են գալիս որպես հանցավորի պահանջմունքների բավարարման և նպատակներին հասնելու միջոց: Դրանք են՝ ավազակությունը, բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով զուգորդված կողոպուտը, շորթումը, ինչպես նաև ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինի տիրանալն առանց հափշտակելու նպատակի՝ զուգորդված բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով:

2. ՀՀ քրեական գործող օրենսգրքի Հատուկ մասում «բռնություն» կատեգորիան նախատեսված է ավելի քան 50 հանցակազմերում: Միևնույն ժամանակ, քրեական օրենքը չի բացահայտում «բռնություն» կատեգորիայի հասկացությունը, ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում:

3. Ավազակության, կողոպուտի և շորթման հանցակազմերը միայն որոշակի առարկաներով սահմանազատելը ճիշտ չէ: Այս հանցագործություն-ների էությունը ոչ թե առարկայի

առանձնահատկությունների, այլ լրացուցիչ անմիջական օբյեկտի դեմ ոտնձգելու մեջ է: Բացառություն է շորթման հանցակազմը, որի պարագայում օրենքով նախատեսված է այնպիսի առարկա, որը չի կարող լինել սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող այլ հանցագործություններում: Այն է՝ գույքային բնույթի այլ գործողությունները: Ուստի, հանցագործության առարկայով քննարկվող հանցակազմերի սահմանազատումը խիստ պայմանական է:

4. ՀՀ գործող քր. օր.-ի պայմաններում ավազակությունն ավարտված է համարվում ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում կատարելու պահից: Այդ առումով առաջ են գալիս տեսական և գործնական բնույթի մի շարք խնդիրներ, որոնք կապված են տվյալ հանցագործությունը հափշտակությունների շարքը դասելու, ավարտված ավազակությունը դրա փորձից սահմանազատելու, ինչպես նաև ավազակությունից կամովին հրաժարվելու հնարավոր տարբերակներին առավել օբյեկտիվ գնահատական տալու հետ: Այդ առումով ավազակությունն անհրաժեշտ է նախատեսել նյութական հանցակազմով՝ սահմանելով այն որպես ուրիշի գույքի հափշտակություն, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

5. Տուժողին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառելը պետք է դիտարկվի «բռնություն» կատեգորիայի (որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության եղանակի) շրջանակներից դուրս և որակվի ինքնուրույն: Ընդ որում, եթե գործադրվող ֆիզիկական բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի նպատակն ու շարժառիթը կապված չեն ուրիշի գույքին կամ գույքի նկատմամբ իրավունքին տիրանալու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու հետ, ապա

դրանք չեն կարող դիտվել միայն որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության եղանակ և պետք է լրացուցիչ որակվեն որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն:

6. Ավազակությունը պետք է համարվի զենքի գործադրմամբ կատարված նաև գազային կամ ազդանշանային զենք կիրառելու այն դեպքերում, երբ դրանց գործադրումը վտանգ է ներկայացնում մարդու կյանքի կամ առողջության համար: Հակառակ պարագայում արարքը պետք է որակել որպես կողոպուտ, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով:

7. Որպես շորթման առավել ծանրացնող հանգամանք նախատեսված է անզգուշությամբ մահ կամ այլ ծանր հետևանքներ պատճառելը: Ընդ որում, որպես ծանր հետևանք կարող է համարվել նաև առողջությանը ծանր վնաս պատճառելը: Ուստի այս առումով անհասկանալի է օրենքում տեղ գտած այն մոտեցումը, որի համաձայն, անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (որպես այլ ծանր հետևանք) հավասարեցված է առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուն: Քր. օր.-ի ներկայիս ձևակերպմամբ ստացվում է, որ նշված արարքն ունի նույն վտանգավորությունը, ինչ որ նշված հետևանքն անզգուշությամբ առաջացնելը, ինչն անընդունելի է:

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ հանցավոր ոտնձգությունների դեպքում կտրուկ բարձրանում է արարքի վտանգավորությունը և մեծանում տուժողին ավելի ծանր վնաս պատճառելու հավանականությունը, տվյալ ծանրացնող հանգամանքն անհրաժեշտ է նախատեսել նաև շորթման և տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու առավել վտանգավոր տեսակների շարքում:

9. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունները ՀՀ-ում շուրջ հինգ անգամ առավել հաճախ են կատարվում քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրի ունևոր բնակչության մեծ մասը կենտրոնանում է հենց քաղաքներում: Դրանք, որպես կանոն, ուղղված են ֆիզիկական անձանց և շատ հազվադեպ՝ իրավաբանական անձանց, պետական կամ հանրային սեփականության դեմ: Ավազակությունների մեծամասնությունը կատարվում են բնակարաններում, առանձնատներում կամ ամառանոցներում: Կողոպուտների և շորթումների մեծամասնությունը, ի տարբերություն ավազակությունների, կատարվում են փողոցներում, պուրակներում կամ այգիներում: Բացառապես նշված վայրերում են կատարվում ուրիշի տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու բռնությամբ զուգորդված դեպքերը: Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կեսից ավելին կատարվում են երեկոյան կամ գիշերային ժամերին: Դրանց հաջորդում են ցերեկային ժամանակին կատարվածները, իսկ առավել փոքր մասնաբաժին ունեն առավոտյան ժամերին կատարվածները: Հետևաբար քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության առումով պետք է առանձին ուշադրություն դարձնել հենց վերոհիշյալ հանգամանքներին:

10. Ներկայումս ՀՀ-ում բավականին բարձր է ոչ միայն ավազակությունների, այլև շորթումների և բռնությամբ զուգորդված կողոպուտների ու տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերի լատենտայնության մակարդակը: Իրականում դրանք գրանցվում են շատ ավելի հազվադեպ, քան փաստացի կատարվում են: Ուստի, համապատասխան վերլուծություններ իրականացնելիս անհրաժեշտ է միշտ հաշվի առնել նախտվյալ համգամանքը:

11. Եթե ՀՀ-ում գրանցված ընդհանուր հանցավորության կառուցվածքում հանցանք կատարած տղամարդկանց մասնաբաժինը միջին հաշվարկով 89.7% է, ապա

քննարկվող հանցանքները կատարողների կազմում՝ 98.4%: Սակայն վերջին տարիներին նկատվում է նաև իգական սեռի ներկայացուցիչների (այդ թվում՝ անչափահասների) կողմից սեփականության դեմ ուղղված բռնությամբ զուգորդված հանցագործությունների թվի աճի միտում: Ընդ որում, նման հանցանքներ կատարող կանայք հաճախ ավելի դաժան և վճռական են լինում, քան տղամարդիկ: Իսկ շորթում կատարող կանայք, ի տարբերություն տղամարդկանց, որպես կանոն, գույքային պահանջն ամրապնդելու նպատակով ոչ թե դիմում են ֆիզիկական բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի, այլ գործադրում են տուժողին կամ նրա մերձավորին անվանարկող տեղեկություններ տարածելու սպառնալիք:

11.1. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ հանցանք կատարողների ընդհանուր թվում գերակշիռ մեծամասնություն են կազմում գործազուրկները (63.2%): Նրանց հաջորդում են մշտական եկամուտի որևէ կոնկրետ աղբյուր չունեցողները (25.7%): Նշված հանցանքները կատարողների 16.8%-ը, թեև, ունեցել են մշտական աշխատանք, բայց հիմնականում ներգրավված են եղել ցածր որակավորմամբ կամ ընդհանրապես որակավորում չպահանջող գործունեության տեսակների մեջ և բացարձակ անտարբեր են եղել այդ աշխատանքը կորցնելու հեռանկարի նկատմամբ:

11.2. Քննարկվող հանցանքները կատարողների պահանջմունքները մեծ մասամբ (շուրջ 90%) կապված են եղել թանկարժեք իրեր, զարդեր, դրամ, ավտոմեքենա, կենցաղային նշանակության տարբեր առարկաներ, հագուստ ձեռք բերելու հետ: Նշված անձանց ավելի քան 80%-ը գործել են շահադիտական դրդումներով, իսկ մնացածը՝ վրեժի, ինքնահաստատման, «գողական դրամարկղը» համալրելու և նման այլ շարժառիթներով: Ուստի անընդունելի է այն մոտեցումը, որ բռնությամբ զուգորդված հափշտակությունները և շորթումները կատարվում են միայն շահադիտական շարժառիթներով

11.3. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ հանցանք կատարողների շուրջ 70%-ը նախկինում դատապարտված են եղել տարբեր հանցագործությունների համար: Վերջիններիս 90%-ից ավելին նախկինում դատապարտված են եղել գույքային բնույթի հանցագործությունների (գլխավորապես՝ գողության, կողոպուտի կամ ավազակության), իսկ մնացածը՝ մարդու դեմ ուղղված բռնությամբ զուգորդված տարբեր հանցագործությունների կամ խուլիգանության համար: Բացի այդ, սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների 30%-ից ավելին ՀՀ-ում իրականացվել են խմբի կողմից: Ընդ որում, գրեթե բոլոր դեպքերում խմբի անդամները ճանաչել են միմյանց շատվաղուց:

12. ՀՀ-ում անչափահասները, ինչպես նաև օտարերկրացիները, գործազուրկները, թոշակառուները, ծառայողներն ու սովորողները շատ հազվադեպ են տուժում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններից: Դրանցից առավելապես տուժում են տղամարդիկ, սակայն վերջին տարիներին նկատվում է կին-տուժողների մասնաբաժնի աննախադեպ ավելացում: Ավելին, 2009-2010 թթ. կանայք ավելի հաճախ են դարձել սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժողներ: Ընդ որում, գրեթե միշտ կողոպուտներից, ի տարբերություն սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող մյուս հանցագործությունների, գլխավորապես տուժում են կանայք:

12.1. Քննարկվող հանցագործություններից, որպես կանոն, տուժում են նյութապես ապահովված անձինք: Դրանցից շատ հազվադեպ են տուժել անապահով խավի ներկայացուցիչների հիմնական մասը կազմող գործազուրկները (1.3%), սովորողները (1.2%) և թոշակառուները (0.9%): Միևնույն ժամանակ, բավականին մեծ մասնաբաժին ունեն մասնավոր բիզնեսով զբաղվողները (7.3%): Տուժողների մնացած մասն են կազմում մշտական եկամուտներ չունեցողները, արտագնա

աշխատանքներից մշտապես կամ ժամանակավորապես վերադարձողները, քաղաքացիական ծառայողները, գյուղատնտեսությամբ զբաղվողները նայլն:

13. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխման առումով էական նշանակություն կարող են ունենալ սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական բնույթի ընդհանուր-սոցիալական հետևյալ միջոցառումները՝

1) երկրում քաղաքական կայունության ապահովումը,

2) տնտեսական ճգնաժամի հաղթահարումը և նոր աշխատատեղերի ստեղծումը,

3) բնակչության բեւռացման մեղմումը, գործազրկության մակարդակի նվազեցումը և անապահով ընտանիքների կենցաղային պայմանների բարելավումը,

4) ալկոհոլամոլության, թմրամոլության, թափառաշրջիկության և մուրացկանության դեմ պայքարի ուժեղացումը,

5) երկրի բնակչության իրավական դաստիարակության ընդլայնումն ու կատարելագործումը:

14. Քննարկվող հանցագործությունների բնութագրական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առանձնացվում են դրանց հատուկ կանխման հետևյալ ուղղությունները.

– սոցիալական հսկողության ապահովում այն անձանց նկատմամբ, ում վարքագիծն ու առանձնահատկությունները վկայում են նրանց կողմից սեփականության դեմ ուղղված բռնությամբ զուգորդված հանցանք կատարելու հավանականության մասին,

– վարչական հսկողություն նախկինում նման կամ այլ հանցանքներ կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ,

– սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող նախապատրաստվող հանցագործությունները և դրանց հավանական կատարողներին բացահայտելուն, ինչպես նաև դրանք կանխելուն կամ խափանելուն

ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացում,

– սեփականության դեմ ուղղված և բռնությամբ զուգորդված արդեն իսկ կատարված հանցագործությունների բացահայտում և դրանցում մեղավորների պատասխանատվության անխուսափելիության ապահովում,

– սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարված հանցագործությունների համար պատիժ կրող անձանց ուղղման, նրանց վերասոցիալականացման հետ կապված հատուկ միջոցառումների իրականացում,

– սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարված հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելում:

15. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխման առումով հատկապես կարևորվում են վիկտիմալոգիական բնույթի միջոցառումները: Ըստ այդմ, պետք է խուսափել անծանոթների առջև բնակարանի դուռը կամ առանձնատան դարպասը բացելուց, կասկածելի անձանց հետ շենքի շքամուտք կամ վերելակ մտնելուց, ավտոմեքենա նստելու առաջարկությունն ընդունելուց: Ավելորդ ուշադրություն չգրավելու համար, անհրաժեշտ է հիմնականում հնարավորինս պարզ հագնվել և խուսափել թանկարժեք իրեր կրելուց կամ, գոնե, հավանական վտանգը կանխատեսելով, թաքցնել դրանք պայուսակի մեջ կամ հագուստի տակ: Գիշերային ժամերին պետք է հնարավորինս խուսափել ոչ մարդաշատ վայրերից, վատ լուսավորված փողոցներից, ստորգետնյա անցումներից, պուրակներից, մետրոյի և հասարակական այլ տրանսպորտի կանգառներից: Իսկ այն դեպքերում, երբ ուշ ժամերի, մթով տուն վերադառնալու անհրաժեշտություն է առաջանում, պետք է ընտրել ոչ թե ամենակարճ, այլ ամենաանվտանգ, մարդաշատ, լուսավորված ճանապարհը, անգամ եթե այն շատավելի երկար է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՅՈԼԱԾ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դասակարգման որոշ առանձնահատկությունների մասին // Պետություն և իրավունք, № 3 (53): Երևան, 2011, էջեր 107-113:

2. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրն ըստ ՀՀ քրեական օրենսդրության // Օրինականություն, № 67: Երևան, 2011, էջեր 34-39:

3. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բնութագիրն ըստ արտասահմանյան որոշ երկրների քրեական օրենսդրության // Օրինականություն, № 77: Երևան, 2013, էջեր 16-23:

4. Բռնությունը որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության հանցակազմի հատկանիշ // Պետություն և իրավունք № 2-3 (60-61): Երևան, 2013, էջեր 37-44 (համահեղինակությամբ):

5. Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը // Օրինականություն, № 78: Երևան, 2013, էջեր 38-46:

АЛОЯН ГОР АРАМАИСОВИЧ

НАСИЛИЕ КАК СПОСОБ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ СОБСТВЕННОСТИ: УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена уголовно-правовым и криминологическим проблемам борьбы с насильственными преступлениями против собственности в Республике Армения. В этом контексте представлены результаты сравнительного исследования понятий насилия и насильственных преступлений против собственности по уголовному законодательству РА и зарубежных стран.

Научная новизна диссертации состоит в том, что в ней впервые в Армении на уровне диссертационного исследования проведен всесторонний и подробный анализ уголовно-правовых и криминологических проблем наильственных преступлений против собственности.

Кроме того, с целью повышения эффективности борьбы с указанными преступлениями на основе исследования представляются научно обоснованные и практически значимые предложения по совершенствованию уголовного законодательства и правоприменительной практики Республики Армения.

В этом контексте прежде всего обсуждаются вопросы, связанные с понятием насилия как способа преступления против собственности. В частности, отмечается, что понятия “насилие” и “преступление” не могут считаться идентичными. Преступными могут считаться только те проявления насилия, которые предусмотрены в УК в качестве объективного признака преступления.

Отмечается, что более чем в 50 статьях действующего УК РА (в том числе, в 4 статьях, предусматривающих ответственность за насильственные преступления против собственности) предусмотрено понятие “насилие”. Причем в данном случае имеются ввиду не только статьи, в которых данное понятие прямо предусмотрено, но и те, в которых законодатель использовал понятия, под которыми оно подразумевается.

Кроме того, отмечается, что в качестве способа совершения насильственного преступления против здоровья следует понимать не только применение физического насилия и угрозу его применения, но и введение в организм потерпевшего, против его воли, алкоголя, наркотических и психотропных веществ либо угрозу совершения подобных деяний.

Рассматриваются также объективные и субъективные признаки насильственных преступлений против собственности. В данной связи анализируются соответствующие законодательные предписания и выявляются проблемы, связанные с практикой их применения. Так, в связи с субъективными признаками названных преступлений отмечается, что мотив насильственного хищения или вымогательства не обязательно должен быть корыстным.

В диссертации рассматриваются также количественные и качественные показатели исследуемых преступлений в РА. В частности, в соответствии с данными официальной статистики последних лет удельный вес насильственных преступлений против собственности в структуре общей преступности составляет 3.6%, а это достаточно серьезная проблема для современного армянского общества. В связи с этим подчеркивается необходимость применения всех возможных мер, направленных на повышение эффективности борьбы с указанным видом преступности. Кроме того, в диссертации отмечается, что за последние годы в Республике Армения наблюдаются довольно неблагоприятные тенденции насильственных преступлений против собственности.

В связи с социально-демографическими особенностями лиц, совершивших насильственные преступления против собственности в РА, отмечается, что 98.4% из них мужчины, однако в последние годы наблюдается рост криминальной активности женщин. Кроме того, удельный вес безработных составляет более 60%. Примерно 70% насильственных преступлений против собственности в РА совершается лицами, ранее привлекавшимися к уголовной ответственности. Более 30% исследуемых преступлений совершаются в составе группы. Исследованы также некоторые морально-психологические и биофизиологические особенности лиц, совершивших насильственные преступления против собственности в РА. В частности: ценностные ориентации, потребности, мотивация и т.д.

Кроме того, результаты исследования уголовных дел о насильственных преступлениях против собственности, рассмотренных судами общей юрисдикции РА, показывают, что в механизме совершения указанных преступлений значительную роль играют также личность и поведение потерпевших. Исходя из данного факта, диссертант считает, что одним из главных направлений в деле предупреждения насильственных преступлений против собственности является виктимологическая профилактика.

GOR ARAMAYIS ALOYAN

VIOLENCE AS A MODUS OF CRIMES AGAINST PROPERTY: CRIMINAL LAW AND CRIMINOLOGICAL PROBLEMS

RESUME

This thesis is dedicated to the criminal-legal and criminological problems of the fight against violent crimes against property in the Republic of Armenia. In this context the results of comparative research of the concepts of violence and violent crimes against property are submited in this research. Connected to this, legislative peculiarities of the mentioned concepts by the Criminal Codes of the Republic of Armenia and foreign countries are analysed.

The scientific innovation of thesis is that the versatile and detailed analysis of the criminal-legal and criminological problems of violent crimes against property are conducted in it for the first time in the Republic of Armenia on the level of the thesis research. Besides, scientifically substantiated and practically significant proposals on the improvement of the criminal legislation and the application of law in practice in the Republic of Armenia are presented on the basis of the study with the purpose of the increasing of the effectiveness of struggle against the mentioned crimes. In this context the author first of all discusses the Issues related to the understanding of violence as an attribute of a crime against property. In particular, it is noted, that the "violence" and "crime" concepts can not be identified. Not all manifestations of violence can be recognized as a violent crime. Therefore, the offense may be only those acts of violence, which are provided in the Criminal Code as an objective feature of crime.

Besides, it is mentioned, that in the current Criminal Code of the RA the category "violence" is provided in more then 50 articles, including in 4 articles providing responsibility for crimes against property. Moreover, in this case is meant not only those articles, in which the concept of violence is directly provided, but in which the lawmaker using the concepts implying violence. It is also noted, that as a violent crimes against property method should be considered not only physical force, or the threat of its use, but also injecting into the victim's body, against his will, an alcohol, drugs or toxic substances, or the threats of these acts.

The attributes, which characterize the objective and subjective parts of the violent crimes against property are discussed in this thesis too. In this context author has analyzed the corresponding norms of the Criminal Code of the RA and uncovered the certain practical problems. So, disputing the subjective attributes of mentioned crimes author indicates, that it is not oblygatory, that the motives of violent crimes against property are only venal.

The general attributes, which characterize the quantitative and qualitative indices of mentioned crimes in the Republic of Armenia are discussed in this thesis as well. In particular, the author notes that in accordance with official statistics of last years in the structure of whole criminality the ammount of violent crimes against property is 3.6%, and it is serious problem for modern armenian society. Consequently it is necessary to undertake all possible mesures for raising the effectivenes of the fight against mentioned crimes. Besides, in this thesis is mentioned, that in the last years the trends of the violent crimes against property in the Republic of Armenia are unfavourable.

Connected with the social-demographic peculiarities of persons, who has committed violent crimes agaist property is mentioned, that 98.4% of them in the RA are men, but last years the increasing of the density of women is observed. Besides, the density of unemloyeds is more then 60%. About the 70% of violent crimes against property in the Republic of Armenia are committed by the repeat offenders. Besides, more then 30% of these crimes are committed in the group.

Some moral-psychological and biophyziological peculiarities of the persons, who has committed violent crimes agaist property in the Republic of Armenia are discussed in the present paper as well: the value orientations, the needs, the motivation, the diseases.

Besides, the results of the research of the criminal cases on violent crimes agaist property reviewed by the courts of the first instance of the Republic of Armenia showed that the person of victims and their behavior have an essential importance in the mechanism of mentioned crimes. So, according to the oppinion of the author of this dissertation, the victimological prevention is one of the main directions of the fight against violent crimes agaist property.